



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«04» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 013 - 25

Նախաձեռնող՝

Գարիկ Գրիգորյան

ք. Երևան, Հայրիկ Մուրադյան 42/2 շենք, 13 բնակարան

Գործունեությունը՝

**Մոլդովական 27/6 հասցեում բազմաբնակարան
բնակելի շենքի կառուցում**

ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 013 - 25

«04» փետրվարի 2025թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական 27/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝
Փաստաթղթի տեսակը՝

Գարիկ Գրիգորյան
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն/նախագիծ
«Բ» կատեգորիա
ք. Երևան, Մոլդովական 27/6

Գործունեությունը՝
Գտնվելու վայրը՝

Ներածական մաս. Գարիկ Գրիգորյան նախատեսում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական 27/6 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 15122022-01-0311, ծածկագիրը՝ 01-008-0003-0419 և Երևան համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 01/50-01-315-24, տրված՝ 04.06.2024թ.:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նախագծվող շենքի հողատարածքը ունի թեքություն՝ նիշերի առավելագույն տարբերությունը կազմում է 9 մետր, որի հաշվին նախագծվել է +2 հարկի տարբերություն վերին և ստորին կետերում, 0 և -1 հարկերից հետոտն մուտքեր, իսկ -2 հարկից՝ ավտոկայանատեղիի մուտք: Տարածքում առկա է 200 մ³ քանակությամբ հողաբուսաշերտը: Մոլդովական փողոցի հարակից տարածքում առկա են ծառեր, որոնք վերատնկվելու են, իսկ չորացած ծառերը հատվելու են: Հաշվետվությամբ ներկայացված և գրականական տվյալների նույնականացման արդյունքում, բուն գործունեության իրականացման տարածքում, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, ինչպես նաև կենդանիների բնադրավայրեր, միգրացիոն ուղիներ չեն հայտնաբերվել:



Նկարագրական մաս. Նախագծվող բնակելի շենքի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.34859 հա: Նախատեսվում է կառուցել 20 հարկանի 1 մասնաշենքից բաղկացած բնակելի շենք՝ կից քառահարկ ստորգետնյա ավտոկայանատեղիով: Ավտոկայանատեղիները նախատեսվում են 119 մեքենայի համար՝ բանակչության կարիքների 77 %-ի չափով: Ավտոկայանատեղիները ապահովված են լինելու հրդեհամարման և հրդեհաշիջման, ծխահեռացման համակարգերով, սանհանգույցներով: -1 և 1 հարկերում նախատեսվում են հասարակական և օֆիսային տարածքներ, իսկ մնացած հարկերը բնակելի են: Շենքը ունի հատակագծային բազմանկյուն ուրվագիծ: Տարածքի ռեյինֆային բնական թեքությամբ պայմանավորված շենի 1-2 հարկերը շենքի մի կողմից կլինեն ստորգետնյա, մյուս կողմից վերգետնյա: Նույն ձևով նախագծվել է նաև ավտոկայանատեղին, որը տարածքը մուտքից ունի զրոյական նիշ՝ կանաչ գոտիով, իսկ մյուս կողմից քառահարկ ավտոկայանատեղի, որի վրա նախատեսվում է խաղահրապարակ և ֆուտբոլի դաշտ: Շենքի արտաքին ծածկույթը լինելու է ապակյա, որը թույլ է տալիս բոլոր բնակարաններում ունենալ բնական լուսավորություն:

Շենքի արտաքին պարագծին զուգահեռ նախատեսվում է ունենալ հրշեջ մեքենայի համար ճանապարհ՝ համապատասխան նորմատիվային հեռավորություններով: Տանիքը հարթ է, ունի կազմակերպված ջրահեռացման համակարգ:

Շենքի նախագծով նախատեսված հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները նախատեսված են տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի համաձայն: Նախագծվել է հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ:

Բնակելի շենքի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 3485.9 մ²,
- կառուցապատման մակերես՝ 691.34 մ²,
- կանաչապատման մակերես՝ 1457 մ²,
- անջրանցիկ մակերես՝ 773.11 մ²,
- ճանապարհ 450.5 մ²,
- բնակարանների քանակ՝ 149,
- ավտոկայանատեղիների քանակ՝ 119,

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից: Շինարարության ընթացքում օգտագործվելու են երկաթբետոնե մետաղական կառուցվածքներ, ավազ, ապակի, երեսպատման սալիկներ, երկաթբետոն և այլն: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում

քայլեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոռում՝ վառելիքի կամ քայլերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարության ընթացքում իրականացվելու 47500 մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 6400մ³ օգտագործվելու է հետլիցքի համար, իսկ 41100 մ³ հանվող գրունտը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Գործունեության իրականացման հետևանքով (շինարարության և շահագործման փուլերում) առաջանալու են թափոններ՝ շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ 1500 մ³ ծավալով, կոշտ կենցաղային թափոններ՝ 15600 կգ/տարի: Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում են տեղադրել աղբամաններ: Աղբահեռացումը կատարվելու է Նոր Նորք վարչական շրջանի համապատասխան ծառայության հետ համաձայնեցված:

Հայտում ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվող մեղմացնող միջոցառումների համապատասխանությունը:

Պարճառարանական մաս.

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս՝ 1387 մ², կտնկվեն 8 ալբիցիա լենքորանյան, 4 կատալպա սովորական, 7 թղկի սրատերև, 9 կաղնի շագանակատերև, 16 լաբուռնում անագիրատերև 8 հուդայածառ կանադական, 4 ֆորսիցիա, 3 գիհի կազակական և 450 թփեր:

Բարեկարգման և կանաչապատ գոտիների կազմակերպման աշխատանքների իրականացման ժամանակ կկառուցվի անջրանցի մակերես՝ 773.11 մ² տարածքում, 240 մ² հետնիտոյին անցումներ՝ գեոցանցի եղանակով և կստեղծվի 1475 մ² մակերեսով կանաչ գոտի: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 250 մ³ բուսահող, որը ձեռք կբերվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,



- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Շենքի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպջողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային լուսմներն իրականացվել են Նոր Նորք վարչական շրջանում: Հանրային լուսմ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացված հանրային լուսմներում բարձրացված հարցերի պարզաբանումները ներառվել են լրամշակված հաշվետվության մեջ: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:



2. Շենքի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գարիկ Գրիգորյանի կողմից փորձաքննության ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական 27/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սուսաննա Անտոնյան